

Բարեկեցության համաթիվ. ՀՀ բարեկեցության ցուցանիշները

Նավասարդյան Մ. Ա.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Հայաստան, Երևան)
navasardianmichael@gmail.com

Վճռորոշ բառեր՝ բարեկեցություն, բարեկեցությունը ձևավորող կատեգորիաներ, բարեկեցության վրա ազդող գործոններ, սոցիալական կապիտալ, բարեկեցության ինդեքս:

Индекс благосостояния: показатели благосостояния РА

Навасардян М. А.

Армянский государственный экономический университет (Армения, Ереван)
navasardianmichael@gmail.com

Резюме: Понятие благосостояние носит разнообразный характер. Институт Легатум сгруппировал по секторам различные факторы, влияющие на благосостояние, и рассчитал комбинированный показатель: индекс благосостояния. По этому показателю Армения занимает 88-е место из 149-и исследованных стран. Несмотря на то, что за последние два года Армения улучшила свою позицию на 10 пунктов, индекс и его ключевые составляющие индикаторы показывают, что страна своими показателями занимает положение ниже среднего, стоит обращать особое внимание на проблемы социального капитала.

Ключевые слова: благосостояние, категории формирующие благосостояние, факторы влияющие на благосостояние, социальный капитал, индекс благосостояния.

Prosperity index: prosperity indicators of RA

Navasardyan M. A.

Armenian State University of Economics (Armenia, Yerevan)
navasardianmichael@gmail.com

Abstract: The concept of prosperity is diverse. The Legatum Institute has grouped the various factors affecting prosperity and calculated combined index: the prosperity index. According to this indicator, Armenia ranks the 88th position through 149 countries studied. Despite the fact that Armenia has improved its position by 10 points over the past two years, the index and its key indicators show that the prosperity in the country is below average: it is worth giving special attention to the problems of social capital.

Keywords: prosperity, categories forming prosperity, factors affecting prosperity, social capital, prosperity index

Դիտարկելով բարեկեցությունը տնտեսագիտական տեսանկյունից՝ աշխատանքում ներկայացվում է Լեգատում անկախ կրթական բարեգործական ինստիտուտի կատարած ուսումնասիրության վերաբերյալ վերլուծություն: Ուսումնասիրությունը վերաբերում է բնակչության բարեկեցությանը, հաշվարկում նոր ինդեքս: Կժանոթանանք դրա էությանը, նշանակությանը, համաթվի վրա ազդող գործոններին, հաշվարկման մեթոդիկային, ստատիկ և դինամիկ վերլուծություն կկատարենք ՀՀ տարբեր տարիներին գրանցած ցուցանիշների հիման վրա:

Բարեկեցության համաթիվը կոմբինացված ցուցանիշ է, որը չափում է երկրների ձեռքբերումները դրանց բարեկեցության և բարգավաճման տեսանկյունից:

Բարեկեցությունը տնտեսական կարևորագույն կատեգորիաներից է, և տնտեսագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել դրա տարբեր մեկնաբանումների: Բազմաթիվ բնորոշումներից ամենաընդգրկունը թերևս հետևյալն է. բարեկեցությունը պետությանը, բնակչությանը, սոցիալական խմբին, ընտանիքին, անհատին անհրաժեշտ նյութական, սոցիալական և հոգևոր բարիքներով ապահովվածությունն է: Այն առարկաներով, ծառայություններով ու պայմաններով, որոնք բավարարում են մարդկային որոշակի պահանջ-մունքները [1, շ. 83]:

Բարեկեցությունը բավականին համընդգրկուն հասկացություն է: Որոշ հեղինակների կարծիքով այն իր մեջ ներառում է, իսկ ըստ որոշների էլ նույնականացվում կենսամակարդակ, կյանքի որակ, մարդկային զարգացում,

կենսաձև, կենսապայմաններ այլ հասկացությունների հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավելի քան 200 գործոններ ազդում են բարեկեցության վրա և կարող են դիտարկվել համաթվի հաշվարկի մեջ ներառվելու համար: Ուսումնասիրելով յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը բարեկեցության վրա՝ դրանց քանակը կրճատեցին՝ 200-ից հասցնելով 104-ի [2], որոնք խմբավորված են ստորև նշված 9 կատեգորիաների մեջ: Վերջիններս էլ արտացոլում են հասարակության կյանքի տարբեր ասպեկտները և բնութագրում հասարակության բարեկեցությունը:

- Տնտեսության որակ,
- բիզնես միջավայր,
- կառավարում,
- անձնական ազատություն,
- սոցիալական կապիտալ,
- անվտանգություն և պաշտպանություն,
- կրթություն,
- առողջապահություն,
- բնական միջավայր:

Համաթիվը հաշվարկելու համար իրականացվում են հետևյալ հաջորդական քայլերը.

1. Տվյալների նորմավորում. գործոնները, առանձին վերցրած, տրված են տարբեր չափման միավորներով, օրինակ՝ մարդ, տարի, տոկոս: Որպեսզի դրանց համեմատումը և բարեկեցության համաթվի հաշվարկը լինեն ճշգրիտ և ընդունելի, դրանց նորմավորման անհրաժեշտություն է առաջանում: Այս խնդրի լուծման համար օգտագործվում է «մինչև սահմանագիծը հեռավորության» մոտեցումը: Ըստ դրա՝ համեմատվում է երկրի արդյունավետությունը բոլոր երկրների կողմից գրանցած լավագույն և վատագույն ցուցանիշների միջակայքում:

2. Գործոններին տրվում են համապատասխան կշիռներ. յուրաքանչյուր գործոնի կշիռ ցույց է տալիս բարեկեցության վրա դրա ազդեցության կարևորության աստիճանը [3, p. 18-20]: Այս համաթվի հաշվարկման գործընթացում կշիռները 4-ն են՝ 0,5, 1, 1,5, 2:

3. Յուրաքանչյուր կատեգորիայի համար իրականացվում է ամեն երկրի գրանցած ցուցանիշի հաշվարկ, որն իրականացվում է կշռված միջինի մեթոդով:

4. Բարեկեցության համաթվի վերջնական հաշվարկ, որն իրականացվում է միջին թվաբանականով:

Համաթվի հաշվարկը կատարվել է 149 երկրների համար [4], կազմվել են նաև երկրների վարկանիշային աղյուսակներ, ըստ դրանց բարեկեցության ինդեքսի, ինչպես նաև այն ձևավորող 9 հիմնական կատեգորիաների:

Դիտարկենք բարեկեցությունը ձևավորող կատեգորիաներում ՀՀ գրանցած ցուցանիշները, ինչպես նաև ՀՀ զբաղեցրած հորիզոնականները ամբողջ աշխարհի և Արևելյան Եվրոպայի երկրների շարքում 2018 թ.-ի զեկույցի համաձայն, որն արտացոլում է 2017 թվականին գրանցած ցուցանիշները:

Ինչպես տեսնում ենք, ամենալավ ցուցանիշը գրանցել է կրթության ոլորտում՝ զբաղեցնելով 48-րդ հորիզոնականը 149-ից: Մասնավորապես տվյալ ոլորտում առավել բարձր ցուցանիշ է գրանցել «կրթության մատչելիություն» գործոնով (16-րդ հորիզոնական): Որպես ՀՀ գրանցած լավագույն ցուցանիշներ առանձնացնենք նաև «աշխատանքային շուկայի ճկունություն» (18-րդ), «առևտրային մրցունակություն» (19-րդ), «առևտրի պարզություն» (37-րդ) գործոնները:

Իսկ ամենացածր ցուցանիշը գրանցել է «սոցիալական կապիտալ» կատեգորիայում՝ զբաղեցնելով 133-րդ տեղը: Որպես ՀՀ վատագույն ցուցանիշներ առանձնացնենք «ձեռնարկատիրական միջավայր» (146-րդ), «աշխատուժի ներգրավվածություն» (132-րդ), «անձնական և սոցիալական փոխհարաբերություններ» (129-րդ), «քաղաքացիական մասնակցություն» (129-րդ) գործոնները:

Այժմ դիտարկենք Հայաստանի և նրա հարևան երկրների զբաղեցրած դիրքերն՝ ըստ բարեկեցության և այն ձևավորող կատեգորիաների 2018 թ.-ի զեկույցի համաձայն:

Բարեկեցության համաթվով Հայաստանը, ըստ վերջին զեկույցի, իր հարևանների շրջանակներում զիջում է միայն Վրաստանին: Ուշադրություն դարձնենք նաև հետևյալ հանգամանքին. չնայած նրան, որ երկրները բարեկեցության համաթվով իրար մոտ ցուցանիշներ են գրանցել, սակայն դրա «կառուցվածքը» և դրան տանող ճանապարհները տարբեր են: Օրինակ, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանը 9 ոլորտներից լավագույն ցուցանիշը

գրանցել է կրթության ոլորտում(այսպես նաև Ադրբեջանը), ի տարբերություն հենց նույն Վրաստանի, որը լավագույն արդյունքը գրան-

ցել է կառավարման ոլորտում: Նույն կերպ Իրանը՝ առողջապահությունում, Թուրքիան՝ սնտեսության որակով:


Աղյուսակ 1. Բարեկեցությունը ձևավորող կատեգորիաների ՀՀ ցուցանիշները 2018թվականի զեկույցի համաձայն(Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, տվյալները ստացվել են Legatum Institute, Legatum prosperity index-Country profiles, 2018 զեկույցից)

Գործոն	Ցուցանիշ	Համաշխարհային վարկանիշ	Արևելյան Եվրոպայի վարկանիշ
Տնտեսության որակ	60.7	82	15
Բիզնես միջավայր	51.3	89	19
Կառավարում	42.5	95	17
Անձնական ազատություն	53.2	89	17
Սոցիալական կապիտալ	43.0	133	21
Անվտանգություն	73.3	78	20
Կրթություն	71.1	48	16
Առողջապահություն	69.3	92	18
Բնական միջավայր	61.2	72	14
Բարեկեցություն	58.4	88	17

Աղյուսակ 2. ՀՀ և նրա հարևան երկրների դիրքերն՝ ըստ բարեկեցության և այն ձևավորող ցուցանիշների (Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, տվյալները ստացվել են Legatum Institute, Prosperity rankings: Full 2018 data set վիճակագրական հասկերվածից)

Կատեգորիա	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Իրան	Թուրքիա
Տնտեսության որակ	82	92	83	94	55
Բիզնես միջավայր	89	67	69	115	96
Կառավարում	95	56	119	126	93
Անձնական ազատություն	89	74	112	142	113
Սոցիալական կապիտալ	133	124	117	55	100
Անվտանգություն և պաշտպանություն	78	68	59	98	110
Կրթություն	48	65	52	77	83
Առողջապահություն	92	93	69	62	50
Շրջակա միջավայր	72	122	139	99	75
Բարեկեցություն	88	80	99	108	93

Գծապատկեր 1. ՀՀ և հարևան երկրների բարեկեցության ինդեքսների դինամիկան 2008-2018թթ.-ի զեկույցների համաձայն (Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, տվյալները ստացվել են Legatum Institute, Legatum prosperity index-Country profiles, 2018 զեկույցից)



Ծանոթանանք նաև համաթվի դինամիկային ՀՀ և նրա հարևան երկրների 2008-2018թթ.-ի զեկույցների բարեկեցության ինդեքսների միջոցով: Ինչպես տեսնում ենք զծապատկեր 1-ից, բարեկեցության մակարդակով ներկայումս Հայաստանը տարածաշրջանում զիջում է միայն Վրաստանին: Նկատենք, որ նախորդ տարիներին նույնպես ավելի բարձր ցուցանիշ ենք գրանցել հարևաններ Ադրբեջանից և Իրանից, սակայն ընդհանուր առմամբ զիջել ենք Վրաստանին և Թուրքիային: Վերջինիս շրջանցել ենք հենց իր բարեկեցության մակարդակի նվազման հաշվին:

Ըստ ցուցանիշների՝ տարածաշրջանի հիմնական թույլ օղակները կառավարումն ու սոցիալական կապիտալն են, առավել զարգացած է կրթության ոլորտը:

Ամբողջ աշխարհի երկրների ցանկում Հայաստանը դեռ միջինից էլ ցածր դիրք է զբաղեցնում, ինչը բնականաբար պայմանավորված է այլ երկրների համեմատ Հայաստանի ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքով, տարածաշրջանի լարված իրավիճակով, ռեսուրսների սակավությամբ, բնական միջավայրով և սոցիալական կապիտալի թույլ, թերզարգացած մակարդակով:

Հեղինակների մեծամասնությունը սահմանում է սոցիալական կապիտալը որպես սոցիալական կազմակերպության բնութագրիչ, որն իր մեջ ներառում է միջավայրի հուսալիություն, վստահելիություն, տեղեկատվական

ալիքներ, նորմեր և արդյունավետ սանկցիաներ [5, սր. 21]: Հայաստանը պետք է ուշադրությունը լրջորեն սևեռի նաև այս ուղղությամբ, քանի որ, ինչպես տեսանք, դիտարկված երկրների շարքում սոցիալական կապիտալի մակարդակով վերջիններից ենք: Ունենք լուրջ անելիքներ բիզնես միջավայրն ակտիվացնելու ուղղությամբ, կառավարման և առողջապահության ոլորտներում:

Սակայն արդյունավետորեն մշակված սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունը աստիճանաբար տանում է երկիրը դեպի զարգացում, ինչն իր հերթին կնպաստի ՀՀ բարեկեցության ինդեքսի բարձրացմանը և աշխարհի երկրների ցանկում դիրքի բարելավմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Под ред. А.Н. Азриеляна, Большой экономический словарь, 4-е изд., доп. и перераб. М.: Институт новой экономики, 1999 [Edited by A. N. Azrielyan, Big economic dictionary, 4th edition, New Economics Institute, 1999]
2. <https://www.prosperity.com/about/methodology>
3. Legatum Institute, Legatum prosperity index-Methodology report, 2018
4. <https://gtmarket.ru/ratings/legatum-prosperity-index/info>
5. М. Р. Магдеева, Н. Н. Жилина, Т. С. Загидуллина, Социальный капитал: подходы к определению и измерению, Экономическая теория, Россия, 2017 [M. R. Margdeeva, N. N. Zhilina, T. C. Zagidullina, Social capital: approaches to definition and measurement, Economic theory, Russia, 2017]